

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ

ԿԱՏԱՐՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման մասին սույն հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացվում է «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի բ) ենթակետի համաձայն:

2. Հաշվետվությունն ընդգրկում է 2018թ. Օրացուցային տարին (այսուհետ՝ հաշվետու ժամանակահատված):

3. Հաշվետու ժամանակահատվածում գործողության մեջ է եղել «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-95-Ն օրենքը (այսուհետ՝ Ծրագիր): «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված ընկերությունները (ծեռնարկությունները) և «փոքր» օբյեկտները նոր ծրագրի մասն են վերջինիս ուժի մեջ մտնելու պահից»:

4. Հաշվետու ժամանակաշրջանում Ծրագրում ընդգրկված օբյեկտներից մասնավորեցվել են ուղղակի ձևով 2 ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը և 1 գույք, ինչպես նաև աճուրդով մասնավորեցվել են (գնորդների հետ պայամանագրեր են կնքվել) 2 ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը:

5. Հաշվետու ժամանակահատվածում մասնավորեցումից ստացված միջոցները կազմել են 213,229 մլն դրամ, որից՝ ընկերությունների և գույքի մասնավորեցումից ստացված միջոցները՝ 179,413 մլն դրամ, նախորդ տարիներին մասնավորեցված «փոքր» օբյեկտներից հաշվետու ժամանակահատվածում տարածամկետ վճարման ենթակա վճարումներից ստացված միջոցները՝ 33,816 մլն դրամ:

6. Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի սեփականաշնորհման հաշվին մուտքագրվել է 166,671 մլն դրամ:

7. Համաձայն «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-127-Ն և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-126-Ն օրենքների՝ 2018 թվականի ընթացքում մասնավորեցումից ստացված միջոցներից համայնքների բյուջեներ փոխանցվել է 46,558 մլն դրամ:

8. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված

կարգովյուրաքանչյուր մասնավորեցվող ընկերության և գույքի վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև Պետական գույքի կառավարման կոմիտեի ինտերնետային կայքում հրապարակվել է համապատասխան տեղեկատվություն:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

1. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ, ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

9. Աճուրդով մասնավորեցման կատարողականը

Հաշվետու ժամանակաշրջանում աճուրդով մասնավորեցվել են Ծրագրում ընդգրկված 2 ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը, որոնց մասին տեղեկությունները ներկայացված են Հավելված 1-ում:

10. Ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցման կատարողականը

1) Հաշվետու ժամանակահատվածում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է Ծրագրում ընդգրկված 2 ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը և 1 գույք:

2) Ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցված ընկերության մասին տեղեկությունը ներկայացված է սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող Հավելված 2-ում:

11. Մասնավորեցման գործարքների արդյունքում ստանձնած պարտավորությունների կատարողականը

1) Պետական գույքի մասնավորեցման պայմանագրերով 2018 թվականի ընթացքում ներդրումային, սոցիալական երաշխիքների ապահովման և այլ տիպի պարտավորություններ ստանձնել են 8 գնորդներ:

2) 3 գնորդների կողմից պայմանագրերով ստանձնած ներդրումային պարտավորությունները կազմել են 45 մլն ՀՀ դրամ և 100 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի: Սոցիալական երաշխիքների ապահովման մասով 2 գնորդի կողմից նախատեսվել է ստեղծել 119 աշխատատեղ՝ 60 000 ՀՀ դրամ ամսական աշխատավարձով, 4 գնորդներ ստանձնել են պրոֆիլի պահպանության պարտավորություններ:

3) Սոցիալական երաշխիքների ապահովման մասով՝ կատարվել է 1 գնորդի կողմից նախատեսված 20 աշխատատեղի (60 000 ամսական աշխատավարձով) փոխարեն ստեղծվել է 24 աշխատատեղ (73 000 ՀՀ դրամ ամսական աշխատավարձով):

4) 3 գնորդների կողմից ստանձնված պրոֆիլի պահպանման պարտավորությունները կատարվել են:

5) Մասնավորեցման պայմանագրերով 2018 թվականի ընթացքում 3 գնորդների կողմից նախատեսված ներդրումային և 1 գնորդի կողմից ստանձնված պրոֆիլի պահպանման պարտավորությունները չեն կատարվել:

6) Մասնավորեցված օբյեկտների գնորդների կողմից հաշվետու ժամանակահատվածում կատարման ենթակա ներդրումային պարտավորությունների և սոցիալական երաշխիքների կատարման

մասին տեղեկությունները, ըստ առանձին ընկերությունների և օբյեկտների, ներկայացված են Հավելված 3-ում:

12. Ընկերությունների լուծարման գործընթացը

1) «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ծրագրում ընդգրկված ընկերությունները կարող են լուծարվել օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

2) «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընկերությունները չմասնավորեցվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է որոշում ընդունել այդ ընկերությունների լուծարման մասին:

3) Հաշվետու ժամանակահատվածում լուծարման գործընթացում են գտնվել Ծրագրում ընդգրկված 7 առևտրային կազմակերպություն:

4) Հաշվետու ժամանակահատվածում նշված կազմակերպություններից՝ 3 կազմակերպության լուծարման գործընթացն ավարտվել է:

5) Հաշվետու ժամանակահատվածում նշված լուծարվող կազմակերպություններում մարվել է 14,188 մլն դրամ կրեդիտորական պարտք, որից՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 3,916 մլն դրամ, համայնքային բյուջե՝ 649,0 հազ. դրամ, աշխատավարձի գծով՝ 7,364 մլն դրամ և այլ կրեդիտորական պարտքի գծով 2,259 մլն դրամ:

6) Ընկերությունների՝ հաշվետու ժամանակահատվածում լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները ներկայացված են Հավելված 4-ում:

2. «ՓՈՔՐ» ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄ

13. «Փոքր» օբյեկտների մասնավորեցման կատարողականը

1) Հաշվետու ժամանակահատվածում «փոքր» օբյեկտ չի մասնավորեցվել:

2) Նախորդ տարիներին մասնավորեցված «փոքր» օբյեկտներից հաշվետու ժամանակահատվածում տարաժամկետ վճարման ենթակա վճարումներից ստացված պետական բյուջեի եկամուտները կազմել են 33,816 մլն ՀՀ դրամ:

Հավելված 1

«Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի
կատարման 2018 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում աճուրդով մասնավորեցված ընկերությունների մասին

Հ/Հ	Պետական գույքի անվանումը (ծածկագիրը՝ ըստ Ծրագրի)	Գտնվելու վայրը	Պետական կառավարման մարմնի անվանումը	Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Աճուրդի անցկացման ձևը	Մեկնարկային գինը (հազ. դրամ)	Աճուրդի հաղթողի առաջարկած գինը (հազ. դրամ)	Ընկերության հաշվեկշռում ամրագրված պարտա-վորությունները (հազ. դրամ)	Պայմանագրի կնքման ամսաթիվը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	«Վարդենիսի ստոնատոլոգիական պոլիկլինիկա» ՓԲԸ (ծածկագիր՝ 90123)	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, քաղ. Վարդենիս	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, քաղ. Վարդենիս	Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 7-ի N 1562-Ա որոշում	դասական	361,0	361,0	596,0	05.02.2018թ.
2	«Երառսպասարկում» ՓԲԸ (ծածկագիր՝ 74730)	քաղ. Երևան, Մ.Խորենացու փ.26ա	Պետական գույքի կառավարման կոմիտե	Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 7-ի N 1572-Ա որոշում	դասական	17545,57	17545,57	2431,0	20.02.2018թ.

«Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2018 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՍՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈՒՂՈՎԿԻ ՎԱՃԱՌՔԻ Ձևով ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Ընկերության (պետական գույքի) անվանումը, ծածկագիրը՝ ըստ Ծրագրի	Գտնվելու վայրը	Պետական կառավարման մարմինը	Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Պետական գույքի գնահատված արժեքը (հազ. դրամ)	Վաճառքի գինը (հազ. դրամ)	Ընկերության հաշվեկշռում ամրագրված պարտավորությունները (հազ. դրամ)	Ներդրումային պարտավորությունների և սոցիալական երաշխիքների մասին՝ ըստ մասնավորեցման պայմանագրի	Գնորդը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	«Գեոէկոնոմիկա» ՓԲԸ (ծածկագիր՝ 62130)	քաղ. Երևան, Կոմիտասի 49	Պետական գույքի կառավարման կոմիտե	Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 15-ի N 153-Ա որոշում	200	200	63077,2	չկա	Աշխատավորա-կան կոլեկտիվ
2	Տաշիրի կինոցանցի գույք (ծածկագիր՝ 6112)	Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Տաշիրի քաղաքային համայնք, Վ. Սարգսյան փող., 4-րդ թղմ., N 36/1	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 558-Ա որոշում	Տաշիրի կինոցանցին պատկանող «Կինոյի տան» շենքի վնասվածության մակարդակը դասվում է 4-րդ աստիճանի և շենքը ենթակա է քանդման:	1	գույք	Մեկ տարվա ընթացքում ապահովել կինոթատրոնի շենքի քանդման և շինարարական աղբի տեղափոխման, հարակից այգու հիմնման և բարեկարգման աշխատանքների իրականացումը՝ այդ նպատակով կատարելով 32 մլն դրամի ներդրումներ.	Տաշիրի քաղաքային համայնք
3	«Դիլիջան» մանկական հակատուբերկուլյոզային առողջարան ՓԲԸ (ծածկագիր՝ 90112)	Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, քաղ. Դիլիջան, Օրջոնիկիձեի 5/1	Պետական գույքի կառավարման կոմիտե	Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 3-ի N 321-Ա որոշում	134420,4	134420,4	154	չկա	Վարձակալ «Առողջ ապագա բժշկական կենտրոն» ՍՊԸ

«Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2018 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՆՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇՆԻՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

h/h	Մասնավորեցված գույքի և գնորդի անվանումը	Նախատեսված պայմանագրային պարտավորությունները	Կատարման ժամկետը	Կատարման ընթացքը
1	Հրազդանի կինոցանցի «Հրազդան» կինոթատրոնի գույք, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Սպանդարյան փող. : Գնորդ՝ Բազրատ Առաքելյան Պայմանագիր՝ 225-Մ 20.01.2005թ.	Պրոֆիլի պահպանում	20.01.2018թ.	Պահպանվել է:
2	«Գյուղատնտեսական տեխնիկայի փորձարկումներըրում» ՓԲԸ ՀՀ Կոտայքի մարզ, ք.Եղվարդ Երևանյան 2 Գնորդ՝ «ԱԳՐՈՀՈՒԴԻՆԳ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ Պայմանագիր՝ 874-ՈՒ 25.02.2016թ.	100 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ներդրում	25.02.2018թ.	Չի կատարվել: Պարտավորությունը չի կատարվել հաշվարկվել է 20 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի տույժ
3	«Ուենդիզել» ՓԲԸ, Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ Գնորդ՝ «ԲԻԶՆԵՍ-ԼԱՅՆ» ՍՊԸ	Կատարել 25 000 000 ՀՀ դրամ ներդրում և ապահովել 99 աշխատատեղ	25.08.2018թ.	Չի կատարվել Հաշվարկվել 5 000 000 ՀՀ դրամի տուգանք և 5 940 000 ՀՀ դրամի տուգանք աշխատատեղերը չապահովվելու

	Պայմանագիր՝ 857-ՈՒ13.08.2008թ.			համար
4	<p>«Գուգարք» կարի ԱՄ-ի կազմից առանձնացված «Ղարպասի արտադրամաս»-ի գույք</p> <p>Լոռու մարզի Ղարպաս համայնք</p> <p>Գնորդ՝ «ՎԱԲԱ» ՍՊԸ</p> <p>Պայմանագիր՝ 870-ՈՒ, 03.02.2014</p>	ստեղծել 20 աշխատատեղ՝ առնվազն 60 000 ՀՀ դրամ ամսական աշխատավարձով	31.12.2018թ.	Ստեղծվել է՝ 24 աշխատատեղ, 73 000 ՀՀ դրամ ամսական աշխատավարձով
5	<p>«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ</p> <p>Գնորդ՝ «Արմենիան Քամփլըր Փրոգրամ» ՓԲԸ</p> <p>«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ</p> <p>Պայմանագիր՝ 435-Ու 22.10.2002թ.</p>	Պրոֆիլի պահպանում	22.10.2018թ.	Պահանջվել է լրացուցիչ փաստաթղթեր
6	<p>«Ս.Վ.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» ՓԲԸ</p> <p>քաղ.Երևան Ֆուչիկի 30</p> <p>Գնորդ՝ «Ս.Վ.Մալայանի ակնաբուժական կենտրոն» ՓԲԸ</p> <p>Պայմանագիր՝ 601-Ու 07.10.2003թ.</p>	Պրոֆիլի պահպանում	07.10.2018թ.	Կատարված է
7	<p>«Ուղիտ» ՓԲԸ-ի 100% բաժնետոմսեր</p> <p>Գեղարքունիքի մարզ, գ.Նորատուս</p> <p>Գնորդ՝ «Միջազգային ռադիոցանց» ՓԲԸ</p> <p>Պայմանագիր՝ 864-Ու 28.12.2010թ.</p>	Պրոֆիլի պահպանում	29.12.2018թ.	Կատարված է
8	<p>«Գանձաքար» կինոթատրոնի գույք</p> <p>ՀՀ Տավուշի մարզ, Գանձաքար համայնք, 28 փողոց, թիվ 11 հասցե</p> <p>Գնորդ՝ «Տավուշի մարզի Գանձաքար համայնք</p> <p>Պայմանագիր՝ 871-ՈՒ 17.02.2014թ.</p>	20 000 000 ՀՀ դրամի ներդրում	31.12.2018թ.	<p>Հաշտության համաձայնությունը կնքելուց և ՀՀ դատարանի</p> <p>համապատասխան վճռով հաստատվելուց հետո</p> <p>որոշմամբ սահմանված ժամկետում կլուծվի պայմանագիրը:</p>

«Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի
կատարման 2018 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում լուծարման և սնանկացման գործընթացի մասին

Հ/Հ	Ծածկագիրը՝ ըստ Ծրագրի	Ընկերության անվանումը	Հիմնադիրը	Լուծարման մասին Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Լուծարման ընթացքը
1	2	3	4	5	6
1.	90035	«Էկոսերվիս» ՓԲԸ-ի «Գեոմատակարար» ԴՓԲԸ	Պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 929-Ա որոշում	Լուծարված:
2.	62061	«Գրանիտ» ՓԲԸ	Պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1379-Ա որոշում	Լուծարված:
3.	20904.8	«Արթիկի նավթամթերք» ՓԲԸ	Պետական գույքի կառավարման կոմիտե	Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 971-Ա որոշում	Գտնվում է լուծարման գործընթացում:
4.	90111	«Օշական» մանկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ	Պետական գույքի կառավարման կոմիտե	Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 940-Ա որոշում	Գտնվում է լուծարման գործընթացում:
5.	62021	«Արաքս» ՓԲԸ	Պետական գույքի կառավարման կոմիտե	Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 266-Ա որոշում	Գտնվում է լուծարման գործընթացում:
6.	90100	«Ազրոսպասարկում» ՓԲԸ	Պետական գույքի	Հայաստանի	Գտնվում է լուծարման

			կառավարման կոմիտե	Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8- ի N 1268-Ա որոշում	գործընթացում:
7.	90105	«Ընդունելությունների տուն» ՓԲԸ	Պետական գույքի կառավարման կոմիտե	Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 6-ի N 239-Ն որոշում	Լուծարված: